# II

# ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՐԳԵՐ

18

## ԱԽՉԳԱ ՏԱՆՏԱՆ




*Ախչիգ ունիմ հարսնըցու,*
*Գրդրիչ գուզիմ փեսացու,*
*Ախչիգ ունիմ օղերով,*
*Հարս բիդ անիմ քողերով.*

*Որի՞ն դամ, որին չի դամ.*
*Դանիմ իշխանին օշթո՞ւն դամ։*

*Գանաչ ֆառախ մոմերով,*
*Ցալդուր-յուլդուր խոլերով,*
*Ցային դանև ախչիգս,*
*Վեր-վեր գրյնի ախչիգդ։*

*Որի՞ն դամ, որին չի դամ.*
*Դանիմ իշխանին օշթո՞ւն դամ։*

*Դասն արաբա ջիհեղ դամ,*
*Ան չօղանը՝ դահա դամ,*
*Գլոր կուլխուն ֆես ալ դամ,*
*Սրմա մադին սանդռ դամ։*

*Որի՞ն դամ, որի՞ն չի դամ.*
*Դանիմ իշխանին օշթու՞ն դամ։*

*Թարադ մեջքին դողի դամ,*
*Թղդիգ ոտքին մաշիգ դամ,*
*Դուռն ու էրթիգը վար դամ,*
*Դանիմ իշխանին օշթու՞ն դամ։*

*Ինչի՞ իշխանին օշթուն դամ.*
*Հաբուրդա, հաբուրդա, թող էշթա։*

17

## ՕՐՈՐ




*Օրոր գասիմ իմ Նախշունին,*
*Սիրունիկիս օրոր.*
*Օրոր, օրոր, օրոր բալա,*
*Անուշ ծաքուգ:*
*Նանիկ, նանիկ, անգին զավակ,*
*Քաղցր բալաս, օրոր.*
*Խփե աչքդ ու քուն էղիր.*
*Շուռ մեծցիր դունւ*
*է՜, է՜, է՜ է՜ է՜...*

18

## ՆԱՆԻԿ



Օրոր, օրոր գասիմ ես խաս բալիգիս.
Մութը ընդավ արթրխ օրոր ու նանիդ.
Խփին աչիդներդ. քուն մգիր մուշ-մուշ,
Օրով ձլե-ծաղգե զավագրս անուշ։

Մեծցիր ու թոյ քաշե. վաշդ դղաս իմի.
Մորդ խնդացք եղիր. բաբայիդ՝ գոնագ.
Քեզի գնայինք մինք. տուն մեր
ումեթնիս,
Ջավագրս. քուն էղիր. օրոր ու նանիգ։

19 ՔՈՒՆ ԵՂԻՐ ԲԱԼԱ




Քուն էղիր, բալաս,
Աչքդ խուփ արա.
Խումաշ յոռղանդ,
Ջածգիլ իմ վրադ։

Օրոցրդ զօրրիմ՝,
Օրով բոյ քաշիս.

Հոքնած մամայիդ,
Սիրդը չի մաշիս։

Քուն էղիր, բալաս.
Ինձի յա քուն գուր.
Բոյ քաշե, մեծցիր,
Մեզի խնդացուր։

20 ՀԱՎԻ ՋԻՎ




Հավի ջիվ, ջիվ, ջիվ,
Հավը էլլավ թարաքը,
Գերավ մեռղով գարաքը,
Հարփեցավ ու վար ընդավ։

Տանաղ, տանաղ, դանչեցին,
Փաղե տանաղով մոշթեցին,
Թեքուրը վրան ծածգեցին.
Թըռ-թըռ բաբիին էշթիգը։

21

## ԲՈՒՔ ԿՈՒԿԱ

Չափավոր ♩ = 88




*Բուք կուկա, բուք կուկա,*
*Բուքին դագեն մուգ կուկա,*
*Ելեք նայեցեք, ո՞վ կուկա,*

*Օվանես աղան դուն կուկա,*
*Ձոցեն վաշտի ֆոդ կուկա։*

22

## ԲԱԲԱՅԻՍ ԳԱՍԻՄ

♪ = 168




*Բաբայիս գասիմ, ծեծել գուդամ.*
*Մամայիս գասիմ, փեդել գուդամ.*

*Տուռին ծագեն նայել գուդամ.*
*Շունի բես հաչել գուդամ։*

23 ԲԱԴԻՍ ԴԱԳԸ ՆՍՏԵՑԻ

ՉԱՓԱՎՈՐ ♪ = 120




*Բադիս դագը նստեցի,*
*Մադիս դագեն նայեցի.*
*Բադիս դագեն անցնեիր,*
*Բադիս ծագեն նայեիր։*

*Փողոց ճամփաց նայեի,*
*Ինքս անմեղ կլլեի.*
*Թուշս, թուշիդ քսեի,*
*Ու պըռուշդ առնեի։*

24 ԵՐԵՔ ՕՐՎԱ ԼՈՒՍՆԻ ՆՄԱՆ

ՀԱՆԳԻՍՏ ♪=132



Երեք օրվա լուսնի նման ունքերդ,
Խելքս առավ սիլյահ գանթեղ աչքերդ.
Վաշդ բացվիլ էր գարմիր-չերմագ
թուշերդ.
Փընդըռելով չի կդա քու ընկերդ։

Գամար ունքդ գանթեղ աչքիդ շավղ
դուդա,
Նաղ արաձդ քաղցր սրդիս ցավ դուդա,
Զով-ձով աչքիդ քիփրիքները օխի բես,
Զագից սիրդս, չիմ դիմանա, արի դես։

Մայիլ էղա ձոցիդ չիվթե նուռերուն,
Գրագ լցրիր չահիլ սրդիս եղերուն.
Նմանվեցա ես քու սիրուդ խեւերուն.
Զգար ինձի ·ի մեչ մեձ-մեձ սարերուն։

Իմ սիրելի, իմ սիրագան սրմա մազ,
Ասիմ դերդս աս սահաթին իմանաս.
Սախն չի լա սսաձ խոսքիս անիս նազ,
Անգլիցքի քառեթ նստիս, ինձի կաս։

25

ՔՈՒՆՆ ԷԳԻԼ Է




Քունն էգիլ է, աչքն առիլ է,
Յարն էգիլ է, դուռը գայնիլ է.
Ինչ կիդե քի յարին էշթա,
Ինչ կիդե քի քունին էշթա։
Քունն էշթանը, նորեն կուկա,
Յարն էշթանը, նորեն չի կա։

26

## ԱՐՋՈՒ ԽԱՄԲԵՐ




**Արջու.**—*Փառչըս առի, ծուրի կընացի,*
*Դալդըրմիշ արի վերուցի.*
*Հոքիս, հավադըս խամբեր,*
*Աբըռջանըս զորուցի*

**Խամբեր.**—*Ես ասօր չորվախ կնացած չիմ,*
*Ծեռքըս, էրեսըս լվացած չիմ*
*Աղու դասնը գըխըմիմ,*
*Աբըռջանըդ դեսած չիմ։*

**Արջու.**—*Աղու ուզենաս, աղու գըլամ,*
*Ինձի ուզենաս, ես գըլամ,*
*Պայց իմ աբըռջանըս ալ,*
*Ջերմադ ծոցիդ մեջ բենկ է։*

Խամբեր.—*Քաղաքը մեծ չորսդին փորված էր,*
*Ջերմադ օչխարը՝ խուզիյով.*
*Աբըռչանիդ վըրան քու,*
*Ինչպիսի՞ կիր կըրած էր։*

Արզու.—*Քաղաքը մեծ չորստին փորված էր,*
*Ջերմադ օչխարը՝ խուզիյով.*
*Աբըռչանիս վրան իմ,*
*Անունըս ալ կըրած էր։*

Խամբեր.—*Ծուրը գէրթար օլուխ ու օլուխ,*
*Գըքաշեի թոլուխ-թոլուխ.*
*Աբըռչանըդ կըդնողին,*
*Ի՞նչ բիդի դաս մուշտուլուխ։*

Արզու.—*Ծուրը դէշթար օլուխ, օլուխ,*
*Գըքաշեյիր թոլուխ-թոլուխ.*
*Աբըռչանըս գըդնողին,*
*Ինքըս դէշթամ մուշտուլուխ՝*

107

## Ա՜Խ, ՀԱՅԿԱՆՈՒՇ

ՀԱՆԳԻՍՏ-ՉԱՓ ԱՎՈՐ ♪=132




*Պարակ մեճքով, էրգան բոյով Ֆիդան իս,*
*Գդրիչներուն խելքը կլուխեն գըդանիս։*
*Լուսնինդա էր քովս էդած դիշերըդ,*
*Վաշդ պացվիլ էր դարմիր-ջերմադ*
*թուշերըդ։*

*Մեռնիմ չիլա մազիդ դեսռք ֆսվածքին,*
*Սև աչքերուդ անուշ-անուշ նայվածքին։*
*Ա՜խ, Հայդանուշ, վա՜խ Հայդանուշ*
*սիրադան,*
*Սիրող սիրդիդ չիմ մնալ ես բարդաղան։*

## 27 ԾՈՒՅԼ ԱՂՋԿԱ ԵՐԳԸ

Չափավոր ♩. 69




Աղջիկը.—Բաբա, տուն ինծի որի՞ն բիդի դաս։
Հայրը.—Բալամ, ես քեզի սաբանչիի դամ։
Աղջիկը.—Բաբա, ես սաբանչիի չիմ էշթալ,
Նա ինծի չոլը կուզեր ղրկրգե։

Ա.—Բաբա, տուն ինծի որի՞ն բիդի դաս։
Բ.—Բալամ, ես քեզի արաբաչիի դամ։
Ա.—Բաբա, ես արաբաչիի չիմ էշթալ,
Ինծի խաթրանի խանութ ղրկրգե։

Ա.—Բաբա, տուն ինծի որի՞ն բիդի դաս։
Բ.—Բալամ, ես քեզի կուզնիչիի դամ։
Ա.—Բաբա, ես կուզնիչիի չիմ էշթալ.
Նա ինծի բորուք քաշելու գուղա։

Ա.—Բաբա, տուն ինծի որի՞ն բիդի դաս։
Բ.—Բալամ, ես քեզի զուռնաչիի դամ։
Ա.—Բաբա, ես զուռնաչիի չիմ էշթալ.
Ինծի խամիշի թենր ղրկրգե։

Ա.—Բաբա՝ տուն ինծի որի՞ն բիդի դաս։
Բ.—Արի ես քեզի վառղանչիի տամ։
Ա.—Հա, բաբա, ադոր հավեսով դէշթամ.
Բանել պետք չի լալ, ու սալթ գը խաղամ։

## 28 ՓՈՂԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԵՐԳԸ

Չափավոր ♩. = 88




Դեսոք թո լա, թո չիլա,
Թեքը ստագը շադ թո լա.
Ադ ախչիգանը մարը,
Իմիս բիյանաս թո լա։

29

## ՀԱՔԱ ՀԱՐՍԸ

ԱՇԽՈՒՅԺ ♪=168




—«Հաքա, հարսը, ել խաղա,
Հեչ ումուռեդ թո չիլա.
Մամադ գեփե խաթլամա,
Սիրդըդ գուզե չոլամա»։

Հարսը ուրախ օր անցուց,
Հորը, մորը խնդացուց,
Օսկին վիզին շող դուված,
Ալն էրեսեն գաթըըթած։

— «Հաքա, հարսը, ել, գայնե,
Եզվորներուն ընթունե,
Առաջ հալավդ փոխե,
Վերչն ալ ծեռքերն համփուրե։

Հաքա, հարսը, ժողոդվե,
Հանա բաբադ դըդանչե.
Փսազներդ բիդ բաքնե,
Միրաս օսկին բիդ բաշխե։

Հաքա, հարսը, շուդ արա,
Մամադ հանա ծան դուդա.
Էրդու թուշեդ բիդ բաքնե,
Գերդանլըխըդ բիդ բաշխե։

Հաքա, հարսը, ել գայնե,
Մեծ չելեբիդ դուն կուկա,
Հեդը խոսե, խոսք ասա,
Լեզուչեքք քեզ գուդա։

Հարս-սանամար, հոս արի,
Փեշքեշները թոփ արի,
Արի, դասիմ, ձեռքես առ,
Ես ալ գուդամ մեզ սև գառ։

Հաքա, հարսը, սանդուվե,
Հանա փեսադ գայնած է,
Հայդը, հեդը ել խաղա՝
Դնքահարը գը ցանգա։

Հարսը, գնա բաղ ճուր պեր,
Լվացվողներուն սրփիչ պեր,
Ջայը քաշե, շաքար պեր։
Մեդ-մեգ բաժակ չայ ալ պեր։

Հաքա, հարսը, բաղրասավե,
Քողդ վերուր ու բահե,
Աշտխ ժամը անցած է,
Դունն ալ մաքրե ու ավլե։

Հաքա, հարսը, ել նայե,
Ջոլաման ալ բադրաստե,
Եղին մեչը թող լողա,
Մեռղն ալ վրան թող ցոլա»։

Հարսը ընձան ժողողից,
Ամենքեն շադ դոհ մնաց,
Խունդում-չուխում դուն կնաց՝
Ամեն մուրադին հասած։

## ՍԱՄԱՎԱՐԻ ԵՐԳԸ




*Խնամիներն եկան հազար պարով,*
*Ծոցերն լինի թուրինջ նուռով,*
*Քեֆ բիդ անենք սամավարով։*
*Սամավարը կովագան է,*
*Մեչի ճուրը պավագան է։*

*Սամավարի գռանիթն օսկի,*
*Մախրոյ պան է ամեն ազգի,*
*Չայ խմշթողը կուկա խոսքի.*
*Սամավարը կովագան է,*
*Մեչի ճուրը պավագան է։*

*Չայ ասածդ շատ լավ պան է,*
*Ընհեկուր մաշտուն սահաթ դանե,*
*Չի խմողին դոռ բիդ անե։*
*Սամավարը կովագան է,*
*Մեչի ճուրը պավագան է։*

*Չայ խմշթողին աչքը սիրիմ,*
*Ձեռքին պռնիմ բակս տերիմ,*
*Պարմիր թուշեն ես համփուրիմ.*
*Սամավարը կովագան է,*
*Մեչի ճուրը պավագան է։*

*Արծրթե փաղնոց, փափուռ դալաթ,*
*Ոտքին չիշան օրթան տրած,*
*Ջանինք շադ խոսք, խմինք դաք-դաք։*
*Սամավարը կովագան է,*
*Մեչի ճուրը պավագան է։*

*Ագաբալին խուփըռ-խըփու,*
*Դեսրը ոտքը թըփըռ-թըփու,*

*Քամփոռքան է վրան օյլուն,*
*Մեչի գրագը խիստ վառվուն.*
*Չայնիքը վրան գուզա խիստ կունե։*
*Սամավարը կովագան է,*
*Մեչի ճուրը պավագան է։*

*Կամաց կուկա, նազով կուկա,*
*Փաղնոցն լինք մեջի կուկա,*
*Շաքար-չերքեթ թուզով կուկա։*
*Չայ գրխմե շափուռ-շուփուռ։*
*Սամավարը կովագան է,*
*Մեչի ճուրը պավագան է։*

*Ագաբալին ասքես մաշդ է,*
*Փունջ խմշթողը պարմիր վաշդ է,*
*Ոտմով փունջը ընթիր սերթ է։*
*Սամավարը կովագան է,*
*Մեչի ճուրը պավագան է։*

31

## ՀԵՆԴԵՔՆ ԻՆԳԱ




*Հենդեքն ինգա, սանդռ կդա,*
*Սանդըռը դարի չորնին դուվի։*
*Ջոքանը ինձի դառը դուվից,*
*Գառը դարի աղայիս դուվի,*
*Աղաս ինձի չալ ծի դուվից,*
*Ջալ ծին հեծա, Ղարասու կնացի,*

*Վեր նայեցա, թաթավ կուկար,*
*Թաթավ կուկար, սել դըվաղեր.*
*Էրդու ախչիդ սեյր դանեյին —*
*Մեծին անցա, բարև դուվի,*
*Բըղդըգին ալ մայիլ էղա,*
*Առանց սըրգի խայիլ էղա։*

32

## ԳԸՅԴԸՄ ԽԱՉԵՐԵՍ




*Գըյդըմ, դըյդըմ, խաչերես,*
*Մորին կնացին, փադ չիկա,*
*Ջորվախ կնացին ճուր չիկա,*

*Պրինձ-փիլաֆին եղ չիկա,*
*Խնամիներուն դեղ չիկա,*
*Գըյդըմ, գըյդըմ, խաչերես։*

33

## ԱՐԻՑԵՔ ԴՂԱՔ



Արիցէր. դրդար. խրդրալեղ Լշթանք.
Խրդրալեգ Լշթանք ու ախշիդ Նայինք։

Ախշիգ մը կրդանք դեղեցիկ դեսքով.
Անուշ փունութքով, դեսոք անունով.
Սրբմա մադերով, մեռմեռ չագադով
Գամար ունբերով, դանթեղ ա:քերով.
Բրգդրլիդ րիթով, սյմախ պերանով.

Խաւթան քուռունկով. մարգրիդ
ադռայով.
Ջաթալ գըգագով. գեղեցիկ դեսքով.
Անուշ փունութքով, դեսոք անունով։

Բայց քամին փըչից. քողը վար ձըդից.
Ջուքառ էրեսով մեգ չամալ բացից։

34

## ԴԸՄԲԼԻԳԻՆ ԲԱԲՈՒՔԸ

(Կատակերգ)




Մեկը.—Ասօր ձեգի վո՞վ Լղավ,
Մյուսը.—Դըմբըլիգին Բաբուքը։

Միասին.—Դըմբըլ-դըմբըլ չալեցին,
Դըմբըլիգին խախծուցին։

Մեկը.—Հացն ու կինին քասասուրման,
Մյուսը.—Հավի միսն ալ հազիր դանը։

Միասին.—դըմբըլ-դըմբըլ չալեցին,
Դըմբըլիգին խախծուցին։

Հարսին անունը Խև խռոող.
Փեսին անունը Նիդողոս։

Դըմբըլ-դըմբըլ չալեցին,
Դըմբըլիգին խախծուցին։

Առին դարին սուրփ Բոքոս,
Փասադոն էր դեր Բողոս։

Դըմբըլ-դըմբըլ չալեցին,
Վերջն ալ մեյնաղ ջամփեցին։

35 **ՈՒՆԱՆ**

ԺԱՆՐ ♩ = 63




*Սելը էգավ, Ունանին դարավ,*
*Հարը մնաց էդևեն լալեն.*
*Մի լա, բաբա, տուն մի լա, բաբա,*
*Աս քաշածըս քուդուդ մեխքըդ է.*
*Ադենով տուն տաշու գանեիր,*
*Մաշդու քուլթա շադ դը կոդնայիր։*
*Սելը էգավ, Ունանին դարավ,*
*Մարը մնաց էդևեն լալենւ*
*Մի լա, մամա, տուն մի լա, մամա,*
*Աս քաշածըս քուդուդ միխքըդ է.*
*Ժամանագով տուն խաբ դըլայիր,*
*Գաթին մեչը ճուր գը խառնեիր։*
*Սելը էգավ, Ունանին դարավ,*
*Քուրը մնաց էդևեն լալեն։*
*Մի լա, քուրըս, տուն մի լա, քուրըս,*
*Աս քաշածըս քուդուդ մեխքըդ է.*
*Ադենով տուն հարսնիք գեշթայիր,*
*Ուրիշի շալ դուն դըպերեիր։*

36 **ԿՆԱՑԵՔ ԱՍԵՔ ԲԱԲԱՅԻՍ**

ՉԱՓԱՎՈՐ ♩=92



Տղան.—Կնացեք, ասեք բաբայիս,
Դունը-դեզը թո ձախե,
Հինգ հարուր գըռոշ ալ թո շինե,
Թո շինե, թո հանե բանդիցը։

Հայրը.—Դունըս, դեզըս չիմ ձախիլ,
Հինգ հարուր կըռոշ ալ չիմ շինիլ,
Ջիմ շինիլ, գավադս, չիմ շինիլ,
Ջիմ շինիլ, չիմ հանիլ բանդիցը։

Տղան.—Կնացեք, ասեք մամայիս,
Վիզի շալը թո ձախե,
Հինդ հարուր գըռոշ ալ թո շինե,
Թո շինե, թո հանե բանդիցը։

Մայրը.—Վիզիս շալը չիմ ձախիլ,
Հինդ հարուր գըռոշ ալ չիմ շինիլ,
Ջիմ շինիլ, գավագս, չիմ շինիլ,
Ջիմ շինիլ, չիմ հանիլ բանդիցը։

Տղան.—Կնացեք ասեք ախպորս,
Ոդնամանը թո ձախե,
Հինգ հարուր գըռոշ ալ թո շինե,
Թո շինե, թո հանե բանդիցը։

Եղբայրը.—Ոդնամանըս չիմ ձախիլ,
Հինգ հարուր գըռոշ ալ չիմ շինիլ,
Ջիմ շինիլ ախպարըս, չիմ շինիլ,
Ջիմ շինիլ, չիմ հանիլ բադնիցը։

Տղան.—Կնացեք, ասեք քըրոշըս,
Մադի մադնին թո ձախե,
Հինդ հարուր դրռոշ ալ թո շինե,
Թո շինե, թո հանե բանդիցը։

Քույրը.—Մադիս մադնին չիմ ձախիլ,
Հինդ հարուր գըռոշ ալ չիմ շինիլ,
Ջիմ շինիլ, ախպարըս, չիմ շինիլ,
Ջիմ շինիլ, չիմ հանիլ բանդիցը։

Տղան.—Կնացեք, ասեք սիրուհուս,
Մեդալիոնը թո ձախե,
Հինգ հարուր գըռոշ ալ թո շինե,
Թո շինե, թո հանե բանդիցը։

Սիրուհին.—Մեդալիոնըս գըձախիմ,
Հինգ հարուր դրռոշ ալ գըշինիմ,
Գըշինիմ, սիրելիս, դըշինիմ,
Գըշինիմ, դըհանիմ բանդիցը՝

37

## ՕԳԱՅ ԵՎ ԻՍՏԻՐ ՄԱՐԵՐԸ




Ֆըշնայի ձառը հասիլ է,
Բեշիգով Դղան լացիլ է,
Օգայ մարը լըսիլ է,
Ցավս փորը ասիլ է։

Իստիր մարը լսիլ է,
Վայ, գավադս, ասիլ է,
Ջունդին, ձունգին ձեձիլ է,
Օքուռ-օքուռ լացիլ է։

## 38 ԽԱՐԻԲ ՄԵԼՔՈՆ




Օխտը դարի ցավ քաշիլ էր խարիբ Մելքոնը,
Սուրփ Գարաբեդ ուխտ արիլ էր խարիբ
Մելքոնը։
Ծիծես հեծանք ջամփըվեցանք, կեղեն չեթ
էլլանք,
«Ջիմ լալ, աղա, չիմ լալ, աղա, ինքդ էջթայիր։
«Գնա, Մելքոն, դնա, Մելքոն, ուխտդ
ղադարե—
Գոխե վենգուդ, գուբուր խամչիդ, մի մնալ
հալիեն»։
Գոխեցի վենգուս, դուբուցի խամչիս, հասա
Նախչըվան,
Ջամփըվեցանք, ջամփըվեցանք խաղ ու
խունդումով։
Ջամփըվեցանք մինչև Տամբը խաղալ-
խնդալով։
Տամբեն էլլանք, Քափըա հասանք, ոտքերս
ուռեցավ,
Քափքայեն էլլանք, սարը հասանք, սիրդըս
ուռեցավ։

Սարեն էլլանք Թիֆլիս հասանք, մեզ պան
չիմացա․
«Հայ աղաներ, հայ աղաներ, ջարիս շար
կդիք»։
Էրգու ղղաք խոսք մեզ էղանք պոշտա
պռնեցինք,
Մինչորքի պոշտան ալ էգավ, Մելքոնը
լմնցավ։
Հիսունչորս առխադաշներս լաց-կոռում
եղանք,
Մենք փորեցինք, մենք թաղեցինք մեզ հայ
դերդերով։
Հիսունչորս առխադաշներս չորսդին
փաթթած,
Հիսունչորս առխադաշներս էլլանք կնացինք։
«Մուրադս դարեք, ս. Գարաբեդին տուռը
գաբեցեք»,
«Պարև գանիք խաչիկ ախպորս և բաբայիս»,
«Պարև գանիք խաչիկ ախպորս ու մամայիս»։

39. ՇԱՐԵՑԻՆ, ՄՈՐՔՈՒՐ




Աղջիկը.—Շարեցին, մորքուր, շարեցին,
Գոշիս ղերին հասծուցին։

Մորաքույրը.—Թո շարին, բալամ թո շարին,
Ադ ու մարգրիդ գըշարին։

Ա.— Շարեցին, մորքուր շարեցին,
Զունգիս պերին՝ հասծուցին։

Մ.—Թո շարին, բալամ, թո շարին,
Ագ ու մարգրիդ գըշարին.

Ա.—Շարեցին, մորքուր, շարեցին
Բորդիս պերին հասծուցին։

Մ.—Թո շարին, բալամ, թո շարին,
Ագ ու մարգրիդ գըշարին։

Մ.— Թո շարին, բալամ, թո շարին,
Ադ ու մարգրիդ գըշարին։

Ա.—Շարեցին, մորքուր, շարեցին,
Վիզիս պերին հասծուցին։

Ա.—Շարեցին, մորքուր, շարեցին,
Գուլխուս թեփեն գոչգեցին՝

Մ.—Թո շարին, բալամ, թո շարին,
Ադ ու մարգրիդ գըշարին։

40 ՎԻՋԱԳ




Ես իմ վիջագս հանեցի,
Էլլա սալդաթ կնացի.
Դունես, դեղես գրգվեցա,
Հորս-մորս լացուցի։

Իմ մայրիդն ինձ պեբիլ էր,
Անուշ կավագ իր համար.
Օրորոցիս մեջ մեռնեյի,
Գուցե զինվոր չիլայի։

41 **ԱՍՏՎԱԾԱԾՆԻՆ ԵՐԳՈՒՇԱՐԹԻՆ**

ԾԱՆՐ ՉԱՓԱՎՈՐ ♩ — 52




Աստվածածնին երգուշաբթին հայ դղոցը
գանչեցին,
Գանչեցին ու մեմեգ-մեմեղ անուններս
կրեցին.
Դավարի ռես քշեցին, օչխարի բես չոգեցին

Հալավներս հանեցին, սալդաթի հալավ
հաքուցին,
Մնաք բարև, մամա, բաբա, քուր,
ախպարներ, ընգերներ,
Կեշթամ, ամա եդ կալու յալ, ամենեվին
հույս չունիմ։

42 **ՔՍԱՆ ՄԵԳՍ ԳՈԽԵՑԻ**

♪ = 126



Քամանմեղս դոխեցի,
Հորս, մորս լացուցի.
Օֆ, օֆ, օֆ մարիգս,
Ջիկար մեղի աղաղումւ

Դավարի բես քշեցին,
Օչխարի բես պաժնեցին.
Օֆ, օֆ, օֆ, մարիգս,
Քամանմեգ էր դարիքսւ

Դարին ստանոք խոթեցին,
Լանքերս բոյերս չափեցին.
Օֆ, օֆ, օֆ, մարիգս,
Քամանմեդ էր դարիքսւ

Հայի չեքմանս հանեցին,
Սալղաթի շինել հաքուցին.
Օֆ, օֆ, օֆ մարիդս,
Քամանմեդ էր դարիքսւ

Հոսի գոշիգս հանեցին,
Սալդաթի դոշիդ հաքուցին.
Օֆ, օֆ, օֆ մարիգս,
Քամանմեգ էր գարիքսւ

Հոսի կառաուլս հանեցին,
Սալդաթի կառաուղ հաքուցին.
Օֆ, օֆ, օֆ մարիգս,
Քամանմեգ էր տարիքսւ

Թութու բոռչով արիշ հաց,
Ե՞փ բիդ մոռնամ չերմագ հաց.
Օֆ, օֆ, օֆ մարիգս,
Ջկար մեղի աղաղումւ

43

## ԲԱՅՋԱՌ ՔԱՂԱՔ

(Նոր-Նախիջևանի կողմը)




Քաղաք մղանք-բաձըռ դուներ,
Թուլայե դուներ, դեսոք գուներւ
Ա՜յ քաղաք, կովելի քաղաք,
Բայծառ քաղաք, կովելի քաղաքւ

Սոխախները քարվածք արած,
Բեսմե քարը սրրայով շարած,
Ա՜յ քաղաք, կովելի քաղաք,
Բայծառ քաղաք, կովելի քաղաքւ

Ժեք ծի լըծած կոնկան կուկար,
Մեր մալիյեն եդ գմնար.
Ա՜յ քաղաք, կովելի քաղաք,
Բայծառ քաղաք, կովելի քաղաքւ

Սուրփ Գեորգին մաղաղ արինք,
Էգևի ոաքր դներքային դուվինք.
Ա՜յ քաղաք, կովելի քաղաք,
Բայձառ քաղաք, կովելի քաղաք։

Լուսավորչին սոխախը էլլանք,
Քաթոինային սուռաթր դեսանք.
Երեսը աերի Ռաստով արած,
Լուսավորչին էդև արած։

Շաղ աղեղ է, շաղ դեսոք է,
Ամա մեղ պան շատ ամոթ է,

Ամա մեղ բան շաղ ամոթ է,
Ինչի՞ ժամին էդև արիլ է։

Մինաս աղա, Մինաս աղա,
Տուն շուդ արա, մեղի ասա,
Գասին ադբես տուն արիլ իս,
Գասին ադրես տուն տըրիլ իս։

Ա՜յ քաղաք, բայձառ քաղաք,
Կովելի քաղաք, բայձառ քաղաք՝